

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ (26 Մայիսի)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, Ամէն»:

«Ազատութեան կոչեցեալ էք եղբարք»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, մեր Փրկչի Հիսուսի Քրիստոսի մեծ առաքյալը պատգամում է մեզ այսպես. «Եղբայրներ դուք կոչված եք ազատության»: Երբեմն գուցե ոմանց կողմից մոռացվում է, որ ազատության գաղափարը գերազանցապես քրիստոնեական գաղափար է: Ե՛վ գաղափարական իմաստով, և՛ պատմական առումով քրիստոնեությունը մարդկային պատմության հորիզոնի վրա ազատություն է բերել հենց իր սկզբնավորման ժամանակներից: Հելլենա-Հռոմեական աշխարհը ազատության գաղափարի նկատմամբ ուրիշ վերաբերմունք ուներ, նույնիսկ ստրկությունը օրինավորապես ընդունված և հաստատված կարգ էր նկատվում: Եվ այդ ստրկատիրության դրության խորտակման, վերացման հիմնական հարվածը քրիստոնեությունը տվեց, մանավանդ իր հաղթանակից հետո՝ Դ դարու սկզբին: Եվ մեզ համար իբրև հայ ժողովրդի զավակներ հպարտանք է և պարծանք, որ մեր ազգը հենց առաջին իսկ դարից զգաց վեհությունը քրիստոնեության նաև ազատության գաղափարի առնչությամբ: Եվ գուցե սխալված չենք լինի, եթե ասենք, որ Տրդատ թագավորի ժամանակ, և Ս. Գրիգոր Լուսավորչի օրոք քրիստոնեությունը հաղթանակեց Հայաստանում 301 թվականին նաև այդ առումով, նաև այդ իդեալով՝ Հայաստանին, հայ ժողովրդին պարգևելու համար գոնե հոգևոր, մշակութային ազատ ստեղծագործության ճանապարհ: Եվ իսկապես ազատության գաղափարը ոչ միայն քաղաքական իմաստով պետք է ըմբռնել, այլ նաև մշակութային այն հասկացողությամբ, որ իր հոգով ազատ մարդն է միայն ու կարող է նոր և ազատ մշակույթի արժեքներ ստեղծել կյանքի բոլոր բնագավառներում: Եվ այդ ապացույցը տվեց հենց մեր ժողովուրդը Ե դարում՝ հազիվ քրիստոնյա դարձած, կեր-

տեց հաղթական կամարը հայ մշակույթի, հայ ոգեկանության և նաև հայոց անկախության գաղափարին Ավարայրի ճակատամարտով:

Ահավասիկ, սիրելի հավատացյալներ, թե ինչու համար այսօր մենք՝ մեր ամբողջ ժողովուրդը ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի պետք է ոգեկոչենք 1918 թ. մայիսի 28-ի անկախության հոչակագիրը: Պետք է հիշենք նաև մեր այս անցյալը, որովհետև այդ հիմքն է կազմում մեր այսօրվա և վաղվա կյանքին:

Ազատատենչ մնաց միշտ հայ ժողովուրդը նույնիսկ վերջին վեց հարյուր տարիների ընթացքում՝ Կիլիկյան թագավորության անկումից հետո, նույնիսկ բռնատիրական իշխանությունների ներքո ազատատենչ մնաց և անկախության գաղափարն իրականացրեց գոնե հոգևոր-կրոնական, մշակութային մակարդակի վրա մեր Առաքելական Սուրբ Եկեղեցիով: Այս առումով նաև Հայաստանյայց Եկեղեցին հանդիսանում է մեր պատմության մեջ մի կոթող, մի դրոշ, մի պայքարի ճանապարհ ոչ միայն հոգևոր բարոյական իմաստով, այլ նաև ազատության և անկախության գաղափարը ճառագայթեցնող մեր ժողովրդի կյանքի մեջ: Եվ այցյալ դարի կեսերին է, որ սկսվեց, ինչպես գիտեք, այն հերոսական շարժումը, որ արյան ճանապարհով առաջ ընթացավ. շարժում, որ կոչվում է հայ ազատագրական շարժում: Եվ այդ հայ ազատագրական շարժման ճանապարհն է, որ առաջ ընթացավ և հասավ իր հաղթանակին մայիս 28-ի 1918-ի անկախության հոչակումով՝ հիմքի վրա սարդարապատյան մեծ և ճակատագրական հաղթանակի: Որովհետև, կարծում եմ, ճիշտ կլինի մտածել, թե եթե 1918-ի մայիսի 25, 26, 27-ի օրերին հայերը հաղթական դուրս չգային, եթե Սարդարապատի հաղթանակը տեղի չունենար, անշուշտ, որ Թիֆլիսում ստորագրված մայիսի 28-ի փաստաթուղթը երևի կմնար մեռյալ տառ: Բայց փառք Աստուծո, հակառակ նույնիսկ առարկայական նախատեսումներին՝ հրաշքի համազոր պայմաններում, փոքրաթիվ հայ ժողովրդի զավակները կարողացան հաղթանակի պսակը պոկել, և առաջին անգամ լինելով վեց հարյուր տարվա ընթացքում թշնամու դրոշը խոնարհվեց հայ զինվորի առաջ: Այսպես է, որ կյանքի կոչվեց մայիսի 28-ի հոչակագիրը: Առաջին անգամ լինելով, սեր նոր ժամանակներում ստեղծվեց Հայաստանի անկախ պետությունը՝ ժողովրդավարական և ընկերվարական գաղափարախոսության հիմքերի վրա: Ավաղ, այդ նորաստեղծ Հայկական Հանրապետությունը տևեց միայն երկու և կես տարիներ՝ պատմական մեզ համար խիստ աննպաստ պայմանների հետևանքով: Սակայն ազատության և անկախության գաղափարը մնաց անշեջ և վառ հայ ժողովրդի զավակների հոգիների խորքում, ոչ միայն արտասահմանում, այլ նաև հենց Հայաստանում, որը շարունակեց իր ֆիզիկական գոյությունը՝ զոհելով իր անկախությունը: Նույնիսկ այդ պայմաններում հայ ժողովրդի բոլոր ազնիվ զավակների հոգիների մեջ վառ մնաց երազանքը ապագա նոր, ազատ և անկախ մեր հայրենիքին:

Ահա մեր օրերում այդ երազանքը իր հաղթական իրականացման ճանապարհի վրա է գտնվում, ինչպես գիտեք, մանավանդ անցյալ տարվա օգոստոսյան անկախության հոչակագրից հետո: Եվ այս տարի առաջին անգամն է, որ Հոչակագրի հետևանքով ստեղծված հոգեբանական և առարկայական պայմանների մեջ մեր ժողովուրդը ոգեկոչում է և օրհնում հիշատակը 1918-ի մայիսի 28-ի անկախության հոչակագրի:

Այսօր սիրելի հավատացյալներ և դուք, շատ հարգելի հյուրեր, որոնք

եկած եք աշխարհի տարբեր հորիզոններից շատ բարի և ազգանվեր նպատակով, կուզեի կոչ անել բոլորիդ և բոլորիս, որ հավատարիմ մնանք մայիսյան 28-ի գաղափարախոսականին: Կարողանանք մեկտեղվել և միասնական ուժերով, ուրիշների վրա շատ հույս չդնելով, բայց մեր ուժերը համախմբելով կարողանանք հաղթահարել այն բոլոր դժվարությունները, որ կանգնած են մեր առաջ: Եվ միշտ, բոլոր ազատության ճանապարհների առաջ խոչընդոտներ գտնվել են բոլոր ազատատենչ ժողովուրդների պատմության ընթացքում: Այնպես, որ մենք բացառություն չենք կազմում, պետք չէ վախենանք դժվարություններից, ընդհակառակը, ոգևորվենք և ուղիղ ճանապարհով, գուցե առանց աճապարելու՝ հետևելով հարափոփոխ պայմաններին, որոնք մշտապես զարգանում են մեր օրերում մեր շուրջ և աշխարհում ընդհանրապես:

Քիչ հետո՝ հիմա ձեր ներկայությամբ մենք պիտի աղոթենք, գոհաբանական մաղթանք պիտի մատուցենք, նախ հարգելու համար հիշատակը Սարդարապատի հերոսամարտի, Ղարաքիլիսայի և Բաշ Ապարանի ճակատամարտերում զոհված մեր հերոսներին: Փառաբանել նաև այն հզոր անձնավորություններին, որոնք կերտեցին մայիս 28-ի անկախությունը Հայաստանի, փառաբանելու համար մեր այսօրվա ներկա ճիգերը, աշխատանքը և գործունեությունը, և աղոթելու համար, որ Աստված մեր ազգի արդար դատը հաջողությամբ պսակի. այժմ և միշտ. ամեն: